

1933 թ. 9/6 — 16/6

ՀՐԱՀԱՆԳ № 329

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹՆԵՐԻ ՑԱՆԲԵՐԸ ՑՐՏԱ-
ՀԱՐՈՒՄԻՑ ՅԵՎ ԹՐԶՈՒՄԻՑ ԿՐԱԾ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ
ՎՆԱՍՆԵՐԸ ԼՈՒԾԱՐԲԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

Ա. Ինչպիսիք տարբերակներն աղետներից յեվ ինչպիսիք մեռելալսյքներ են ապահովագրվում

§ 1. Գյուղատնտեսական մշակույթների ցանքերը ցրտահարումից և թրջումից սլարտադեր կարգով ապահովագրելու գծով Պետապը պատասխանատվություն կրում և կոլտնտեսությունների և կոլտնտեսականների (գույքի վոչ հանրայնացված մասի վերաբերմամբ) և աշխատավոր միջատնտեսությունների այն վնասների համար, վորոնք առաջ են յեկել՝

ա) ցրտահարումից, բ) թրջումից, գ) փտումից, դ) սառցահարումից (заморожков), ե) հեղեղումից:

Բացի այդ, կոպարային ապահովագրությունը առանձին պատասխանատվություն և սահմանվում աշնան ցանված գարնանացան մշակույթների փչացման համար, այն ե՝ մանանեխի, կորյանդրի, անխոնի և այլն:

§ 2. Պետապի հիշյալ պատասխանատվությունը տարածվում և բոլոր տեսակի գյուղատնտեսական մշակույթների ցանքերի վրա, բացառությամբ՝ ա) յենթաշերտային բույսերի (առվույտ և այլն) դրանց ցանքի 1-ին տարում, բ) կանաչ պարարտացման

համար ցանկող բույսերի, գ) բնական մարգագետինների և խոտ-հարճների խոտերի, դ) պտղատու և իւղողի այգիների տնկի-ների, մանգարինի և թեյի պլանտացիաների, ե) մարգատուն-կերի (հատապտուղների), բանջարանոցային և բոստանային մշակույթների՝ կոլտնտեսականների մոտ (գուլքի վոչ հանրայ-նացված մասի վերաբերմամբ և մենատնտեսություններում:

Բացի այդ, չեն ապահովագրվում այն գյուղատնտեսական մշակույթների ցանքերը, վորոնք պատկանում են անհատական կարգով գյուղհարկ վճարող կուլակային տնտեսություններին, № 3 ցուցակով յեկամուտային հարկ վճարող անաշխատ տնտե-սություններին, իրենց սոցիալական գրությամբ, ծագումով ու նախկին զբաղմունքներով ընտրական իրավունքներից զրկված անձանց:

ՅԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Ցրտահարումից, թրջումից, փտու-մից, սառացահարումից և հեղեղումից առաջացած վնասներն այն գյուղատնտեսական ցանքերի վերաբերմամբ, վորոնք ապահովագրվում են բոլոր տեսակի տարերային աղետներից վճարվում են նույն կարգով, ինչ կարգով սահմանված է բոլոր տեսակի տարերային աղետներից ապահովագրելու գծով վնասները լուծարելու համար:

Բ. Ինչպիսի գումարներով են ապահովագրվում գյու-

ղատնտեսական մշակույթները

§ 3. Գյուղատնտեսական մշակույթների ցանքերը ցրտա-հարումից և փտումից ապահովագրվում են ապահովագրական կայուն նորմաներով (ոուբլիններով) մեկ հեկտարից, վորոնք սահմանված են առկա վայրի համար կոպարային ապահովա-գրության վերաբերյալ վորոշումներով:

Գ. Յերբ և սկսվում յեվ վերջանում ապահովագրությունը

§ 4. Գյուղատնտեսական մշակույթների ցանքերը ցրտա-հարումից և փտումից ապահովագրելու գծով պատասխանատ-վություն սկսվում է՝ ցանովի մշակույթների վերաբերմամբ ծը-լու որվանից, իսկ տնկվող մշակույթների՝ տնկելու պահից և մրգատունկերի՝ ծաղկելու հատապտուղների (ծաղկային վար-սանդ գոյանալու) պահից և վերջանում է բոլոր մշակույթների վերաբերմամբ՝ բերք հավաքելու պահից (այսինքն, յերբ բույ-սերը հնձված են և այլն):

Դարնան այն մշակույթների ցանքերի ապահովագրության գծով, վորոնք ձմեռային սկզբում են ցանված, պատասխանատ-վություն սկսվում է ցանքի որվանից աշնանը և վերջանում դարնան այն ժամկետներում, վորոնք սահմանված են դաշ-նակից հանրապետությունների Տնտխորհների, Ինք. ՍՈՋ ժող-կովորհների, յերկրային և մարդային գործկոմիների վորոշում-մերով:

2. ՎՈՐ ԴԵՊԲԵՐՈՒՄ ՊԵՏԱՊԸ ԶԻ ՀԱՏՈՒՑՈՒՄ ՎՆԱՍՆԵՐԸ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹՆԵՐԻ ՑԱՆՔԵՐԸ ՑՐՏԱՀԱՐՈՒՄԻՑ ՅԵՎ ԹՐՋՈՒՄԻՑ ԱՊԱՀՈՎԱ- ԳՐԵԼՈՒ ԳԾՈՎ

§ 5. Գյուղատնտեսական մշակույթների ցանքերը ցրտա-հարումից և թրջումից ապահովագրելու գծով Պետապը վնասներ չի հատուցում հետևյալ դեպքերում.—

ա) յեթե գյուղատնտեսական մշակույթների ցանքերը փչա-նում կամ վնասվում են, բացի § 1-ում նշվածից, այլ պատճառ-ներով և այն բոլոր դեպքերում, յերբ գյուղատնտեսական մշա-կույթները փչացել կամ վնասվել են ապահովագրվողն (կոլտնտե-սության, կոլտնտեսականի և մենատնտեսի) մեղքով, անկախ ակնահայտ տնտեսավարության, ցանքերի պաշապանության բացա կայության կամ ապահովագրվողի դիտավորյալ գործողություն-ների հետևանքով:

բ) յեթե ցանքերը շրջանային ապահովագրական հանձ-նաժողովի վորոշմամբ պատասխանատվությունից հանված են դեպի ապահովագրված գուլքն անտնտեսվար կամ վնասարար վերաբերմունք ունենալու հետևանքով (պարտադիր կոպարային ապահովագրության կանոնների) 27-րդ:

գ) յեթե փչացած գյուղատնտեսական մշակույթը չի կրկնա ցանված, չնայած վոր կրկնացանքն անհրաժեշտ և հնարավոր է բոտ տարվա յեղանակի:

դ) յեթե տնտեսությունը վնասված տարածություն վրա վոչ մի միջոց ձեռք չի առնում բույսերի հետագա մշակման և խնամքի համար, թեև սովորաբար այդ անում են մյուս տնտե-սությունները տվյալ վայրում, վնասները պակասացնելու համար (բուլիիցը, քաղհանը, հողի մակերեսի ջուրն հոսացնելը և այլն):

յ) յեթե ցրտահարումը, թրջումը, փտումը, սառցահա-
րումը, վնասվելը, հեղեղումը տեղի յե ունենում տարվա աշն-
պիսի յեղանակին, յերբ տվյալ վայրի և տվյալ տարվա պայ-
մաններով ապահովագրված մշակույթի բերքն արդեն հավաքված
պետք և լինելը:

զ) յերբ վնասված տարածության վրա մինչև լուծարքա-
յին ահե կազմելը տնտեսությունը թույլ և տալիս, վոր անա-
սուններ արածացնեն, բերքը հավաքեն խոտի, կերի կամ սիլոսի
համար կամ այլ գործողություններ և թույլ տալիս, վորոնք
պահանջում են տարերային աղետից (ցրտահարումից և այլն)
դերձ մնացած բերքի արժեքը:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Յեթե շրջանային ապահովագրա-
կան հանձնաժողովը վնասների լուծարքան համար սահ-
մանված ժամկետներում ահե չի կազմում, ապա տնտե-
սությունը հայտնում և այդ մասին գյուղխորհրդին, վո-
րից հետո իրավունք ունի կրկնացանք կատարել և հա-
վաքել վնասված մշակույթը խոտի, կանաչ կերի հա-
մար կամ սիլոսի համար և այս դեպքում չի զբղիւում
ապահովագրական վարձատրություն ստանալու իրավուն-
քից § 15.

ը) բաղամայա մրգատունների բույսերի իրենց (բների, ճյու-
ղերի) վնասվելուց առաջացած վնասների համար.

թ) յեթե ցանքատերը (կոլտնտեսությունը, կոլտնտեսա-
կանը, մենատնտեսը) թաքցնում և ցուցակագրումից գյուղա-
տնտեսական մշակույթների այն ցանքերը, վորոնք յենթակա
յեն պարտադիր կոպարային ապահովագրության.

ժ) յեթե ցանքատերը ցրտահարումից, թրջումից, փտումից
սառցահարումից, հեղեղումից առաջացած վնասների մասին ցան-
քերի վնասումը հաստատվելուց 5 օրվա ընթացքում չի հայտ-
նում, ինչպես նաև, յեթե վնասի մասին հայտարարություն տրվում
և բերքը հավաքելուց հետո.

ի) յեթե ցանքատերը ահե հաստատվելու օրվանից 6
ամսվա ընթացքում պահանջ չի առաջադրում ապահովագրա-
կան տեսչին ապահովագրական վարձատրություն վճարելու
մասին:

§ 6. Յեթե թրջումից, ցրտահարումից, փտումից, սառցա-
հարումից, հեղեղումից առաջացած վնասներ լուծարքող հանձնա-

ժողովը պարզում և, վոր ցանքերի փչացման կամ վնասման
պատճառը յեղել և անտնտեսությունը, ապա այդ տնտե-
սությունը վոչ միայն զրկվում և ապահովագրական վարձա-
տրությունից, այլ և պետք և պատասխանատվության յեն-
թարկվի:

3. ՑՐՏԱՀԱՐՈՒՄԻՑ ՅԵՎ ԹՐՋՈՒՄԻՑ ԱՊԱՀՈՎԱԳՐ- ՎԱԾ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅՑՆԵՐԻ ՑԱՆԲԵՐԻ ՏԻՐՈՋ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

§ 7. Ապահովագրված ցանքերի տերը պարտավոր և՛

ա) թույլ չտալ, վոր ցրտահարումից, թրջումից, փտումից,
սառցահարումից հեղեղումից վնասված տարածության վրա ա-
նասուններ արածացնեն և ըստ հնարավորության փրկել չվնաս-
ված ցանքերը լրացուցիչ մշակմամբ (բուկից, քաղհան, պաշտ-
պանություն վնասատուներից և այլն) և ժամանակին ու կանո-
նավոր կազմակերպել մշակումը.

բ) հայտնել վորքան կարելի յե շուտ գյուղխորհրդին, իսկ
կոլտնտեսությունները՝ բացի այդ, նաև շրջանային ապահովա-
գրական տեսչին տեղի ունեցած վնասների մասին, ընդվորում,
այդ հայտարարությունը վորպես կանոն պետք և լինի գրավոր
ու համեմայն դեպս վոչ ուշ քան ցանքերի վնասվելու հանգա-
մանը հաստատվելուց 3 օրվա ընթացքում:

Նշված հնգորյա ժամկետին անպայման պետք և պահպա-
նել, յեթե միայն հայտարարությունը ժամանակին տալուն
չխանգարեն վորեւ պատճառներ:

Հայտարարության մեջ պետք և պարզորոշ ցույց տրված
լինի թե յերբ և (ճշտորեն) տեղի ունեցել տարերային աղետը,
յուրաքանչյուր մշակույթի ցանքերի վնասված տարածությունը,
վնասի մոտավոր չափը, թե արդյոք կարիք կա կրկնացանք
կատարել և ինչպիսի տարածության վրա, կարիք կա արդյոք
այդ պատճառներով վնասը շտապ կարգով լուծարքելու և վո-
րոնք են այդ պատճառները:

գ) Պետադի օրգանների տրամադրության տակ դնել ա-
պահովագրվողի ունեցած այն բոլոր տվյալները, վորոնք
վերաբերվում են ցանքերի վնասված տարածությանը և ամե-
նայն աշակցություն ցույց տալ հանձնաժողովին վնասների չափը
վորոշելու ժամանակ:

Իբր թե տեղի ունեցած վնասները մասին կեղծ և հնարովի հայտարարություններ տալու համար ապահովագրվողը յենթարկվում է քրեական պատասխանատվության:

4. ՎՆԱՍՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՅՏՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

§ 8. Գյուղխորհուրդը, ընդունելով կոտնտեսականներից և մենատնտեսներից վնասների վերաբերյալ հայտարարությունը, ապահովագրվողի հարցաքննության միջոցով պետք է անպայման պարզի և դրանից այն բոլոր տեղեկությունները, վորոնք պահանջվում են այս հրահանգի § 7 «Բ» կետով:

Այդ տեղեկությունների հիման վրա գյուղխորհուրդը կազմում է տուժած տնտեսությունների հայտային անվանացուցակը, ցույց տալով յուրաքանչյուր տնտեսության համար առանձին վնասների մասին ստացված տեղեկությունները և վոչ ուշ քան հայտարարությունը ստանալու հաջորդ օրը ցուցակը ներկայացնում է շրջանային ապահովագրական տեսչին:

§ 9. Շրջանային ապահովագրական տեսուչը, ստանալով կոտնտեսություններից հայտարարություններ, կամ գյուղխորհուրդներից հայտա ցուցակը պարտավոր է՝

ա) գրանցել դրանք ակտերի ռեսուրի մեջ.

բ) անմիջապես հայտնել շրջանային ապահովագրական հանձնաժողովին նախագահին և յերկրի, մարզի կամ Խնք. ՍՈՀ. ապահովագրական օրգանին ցանքերի փչացման կամ վնասման մասին, ցույց տալով դրա պատճառներն ու ժամանակը, տուժած գյուղերի և կոտնտեսությունների թիվը, վնասված տարածություն չափը, ինչպես նաև այն տարածությունը, վորի վերաբերմամբ պետք է վնասների շտապ լուծարք կատարել:

Գերլիմիտային վնասներ տեղի ունենալու դեպքում այդ տեղեկությունները պետք է հայտնել հեռագրով:

գ) կազմել վնասների լուծարքման պլանը (ցույց տալով յուրաքանչյուր վնասի լուծարքման ժամանակը) և ներկայացնել շրջանային ապահովագրական հանձնաժողովի հաստատմանը, վորը վնասներ լուծարքելու համար պետք է մեկնի իր լրիվ կամ մասնիկի կազմով:

5. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅՅՆԵՐԸ ՑՐԱՀԱՐՈՒՄԻՑ ՅԵՎ ԹՐՋՈՒՄԻՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԵԼՈՒ ԳԾՈՎ ՈՎ Ե ՎՆԱՍՆԵՐԻ ԼՈՒԼԱՐՔ ԿԱՏԱՐՈՒՄ

§ 10. Վնասները շրջանային ապահովագրական հանձնաժողովը լուծարքում է իր լրիվ կազմով կամ նրա հանձնարարությամբ շրջանային ապահովագրական հանձնաժողովի մի քանի անդամները շրջանային ապահովագրական տեսչի պարտադիր մասնակցությամբ: Հանձնաժողովը վնասները վորոշելու գործին անպայման մասնակից է անում գյուղատնտեսին կամ գյուղատնտեսական մշակույթների մասնագետին: Բացի այդ կոտնտեսություններում վնասներ լուծարքելիս անպայման մասնակցում է կոտնտեսության վարչության նախագահը կամ կոտնտեսության վարչության հատուկ լիազորված անդամը, իսկ մնացած տնտեսություններում վնասներ լուծարքելու ժամանակ՝ տնտեսության գլխավորը կամ նրա ընտանիքի անդամը:

Գերլիմիտային վնասներ տեղի ունենալու դեպքում այդ վնասների լուծարքումը կատարվում են ապահովագրական վերադաս օրգանները շրջանային ապահովագրական հանձնաժողովի հետ միասին:

Ցանքերի ցրտահարումից և այլ տարերային աղետներից կրած վնասների առթիվ ինքնուրույնաբար լուծարքային ակտեր կազմելու իրավունք գյուղխորհուրդներին և գյուղական ապահովագրական հանձնաժողովներին չի տրվում:

§ 11. Տվյալ շրջանային հանձնաժողովի կազմած ակտի ճշտության համար պատասխանատու յեն նույն հանձնաժողովի բոլոր անդամները, իսկ կեղծ կամ սուտ տեղեկություններ պարունակող ակտեր կազմելու համար հանցավորները յենթարկվում են քրեական պատասխանատվության:

6. ՎՆԱՍՆԵՐԻ ԼՈՒԾԱՐՔՄԱՆ ԿԱՐԳԸ

§ 12. Պետալի օրգաններն ու շրջանային ապահովագրական հանձնաժողովներն ամենաուշադիր վերաբերմունքը պետք է ունենան դեպի վնասների լուծարքման հետ կապված հարցերը, քանի վոր դրանք սերտորեն կապված են մթերում-

ների հետ և վնասները սխալ լուծարքերու դեպքում խոշոր չարարկություններ կարող են տեղի ունենալ, այն է՝ բերքի պահպանցում, վնասված տարածության և վնասների չափի աճելացում:

§ 13. Ապահովագրական վնասների լուծարքման ճշտությունն ապահովելու նպատակով, ապահովագրական որդանները պետք է ստանան տեղական հողային որդաններից (որդերի, վոլթաբանական, փորձնական և այլ) պարբերական տեղեկություններ, վորոնք բնութագրում են աշնանացանի վեգետացիայի պայմանները մինչև վերանց ձյունի տակ մտնելը և նրանց դրությունը ձմեռվա ընթացքում, ինչպես նաև աշնանացան և գարնանացան մշակույթների վեգետացիայի պայմանները, սկսած գարնան շրջանից: Բացի այդ, վնասների լուծարքման ժամանակ պետք է ոգտագործել բերքատվության վորոշող միջշրջանային հանձնաժողովների և պետական մթերող կազմակերպությունների նյութերը:

§ 14. Վնասների լուծարքը կատարվում է յուրաքանչյուր տնտեսության և յուրաքանչյուր գյուղատնտեսական մշակույթի համար առանձին:

§ 15. Վնասների լուծարքը կատարվում է շտապ և ընդհանուր կարգով: Շտապ լուծարքը կատարվում է հետևյալ դեպքերում՝

ա) յերբ գյուղատնտեսական մշակույթներն այնքան խիստ են վնասված, վոր պահանջվում է կրկնացանք կատարել և դա հնարավոր է ըստ տարվա յեղանակի:

բ) յերբ բույսերի վնասումը տեղի յե ունենում բերքահավաքից անմիջապես առաջ, գ) յերբ վնասված ցանքերը պետք է հանձնել խոտի, կանաչ կերի, կամ սիրտի համար, դ) յերբ մրգաբանների բերքն իսպառ վոչնչացնում է:

Շտապ լուծարքը պետք է կատարել շրջանային ապահովագրական տեսչի կողմից վնասների մասին հայտարարություն ստանալուց հինգ որվա ընթացքում:

Յեթե բույսը գննելու ժամանակ կպարզվի, վոր կրկնացանքը կամ հունձը տնտեսապես անհրաժեշտ է, ապա հանձնաժողովը լուծարքը կատարում է շտապ կարգով: Իսկ յեթե բույսերը գննության պահին այնքան են կազդուրվում կամ հետագայում կարող են կազդուրվել, վոր հանձնաժողովը կրկնացանքը

կամ հունձը տնտեսական տեսակետից համարում է աննպատակահարմար, ապա նա կազմում է դաշտային գննության ակտ, իսկ վնասների գնահատումը կատարվում է ընդհանուր լուծարքման կարգով:

Մնացած դեպքերում դաշտային նախնադրական գննությունը կատարվում է վոչ ուշ քան վնասների մասին հայտարարություն ստանալուց 5 որվա ընթացքում:

Յեթե դաշտային գննության ժամանակ պարզում է, վոր վնասման բնույթն ու բույսի դրությունը հնարավորություն են տալիս վորոշելու վնասների չափը, ապա հանձնաժողովը այդ վնասները վերջնականապես լուծարքում է:

Վնասների չափն վորոշելն անհնար լինելու դեպքում կազմվում է նախնական գննության ակտ, իսկ վերջնական լուծարքը կատարվում է ընդհանուր կարգով հանձնաժողովի կամ մարզային, յերկրային, հանրապետական ապահովագրական որդանների սահմանած ժամկետներում, բայց անպայման մինչև վերքահավաքը: Բերքահավաքից հետո վնասներ լուծարքը չի թույլատրվում:

Լուծարքային ակտ կազմելու հիշյալ վերջնական ժամկետը (5 որ) հուլիսային յերկրում, Մուրմանի մարզում, Ուրալի մարզում, Արևիկյան Սիբ. և Արևմտյան Սիբիրի յերկրներում, Բուրյատ-Մոնղոլիայի, Յակատային, Կաղախստանի Կարա-Կալպակիայի և Կիրգիզիայի, Ուզբեկստանի, Թուրքմենստանի և Տաճիկիստանի ԻՍՄՀ համար կրկնապատկվում է:

§ 16. Յրտահարումից, թրջումից, փտումից, սառցահարումից գյուղատնտեսական մշակույթների փչանալու կամ վնասվելու վերաբերյալ ակտեր կազմելիս հանձնաժողովն անպայման պիտի իր տրամադրության տակ ունենա պարտադիր կողաբային ապահովագրության կանոններն ու այս հրահանգը և յեթե հանձնաժողովի վորելի տնդամ ծանոթ չի լինում դրանց, մինչև աշխատանք սկսելն այդպիսիները հայտարարել:

§ 17. Հանձնաժողովի հիմնական խնդիրը տարերային ադետի փաստի ստուգելն է, վորի համար նա պետք է ամենայն խնամքով գննի վնասված մշակույթները:

§ 18. Յրտահարում տեսլով պետք է հասկանալ յերկարատեղ ցրտերի և ուժեղ սառնամանիքների գործողություն, աննշան ձնաշերտի առկայությամբ, յերբ հողաշերտը խորը

սառչում է և բույսն այնքան է սառչում, Վոր ձյունը հալվելուց հետո այլևս չի կենդանանում: Տաք յեղանակը խիստ ցուրտ յեղանակի փոխվելն վոչ բավարար ցրտադիմացկուն բույսերի հյուսվածքում կարող է այնպիսի փոփոխություններ առաջ բերել, վորոնք բույսերի փչացման պատճառ են դառնում:

Յերբ ձնահալքին անմիջապես հաջորդում են խիստ սառնամանիքներ սառած հողաշերտը դուրս է հանում բույսերը. այս դեպքում հողի մեջ գոյացած սառցաշերտը, հաստանալով, դուրս է մղում դեպի վերեւ հասած հողը բույսերի հետ միասին և դրանով իսկ կարող է վնասել արմատներին ու միաժամանակ փչացնել և ամբողջ բույսը: Ցանսերի ցրտահարումը սովորաբար տեղի յե ունենում աշնանը և ձնասալավ ձմեռներում, հողը հանկարծակի և խորը սառչելիս: Աշնան ցանքերի փչացումը հնարավոր է նաև ցուրտ քամիների (հորդոսք) գործողության հետեւանքով, վորոնք, քշում տանում են ձնաշերտը, ինչպես նաև վերին հողաշերտը և մերկացնում ցողունի և թփակալման հանգույցի վերին մասը:

Ցրտահարում պետք է համարել նաև այն դեպքը, յերբ չհալված հողի վրա բույսերը տաք արեւային որերի վրա հասնելիս արագորեն գոլորշիացնում են խոնավությունը և չստանալով այն սառած հողից, չորանում:

Յերաշտոտ շրջաններում աշնանացանը կարող է գարնանը փչանալ հեռեւայլ պայմաններում՝ յերբ աշնան յերաշտից հետո ծիլը յերեմվան են գալիս գարնանը միայն, մարտին— ապրիլին ցրտերը վերադառնալու դեպքում, նոր դեռևս չկազդուրված, ծիլերը հաճախ չորանում են:

§ 19. Փոռումը հասկացվում է վորպես աշնանացանի փչացում: Բույսը խեղդվում է ձնաշերտի կամ սառցակեղևի տակ ողի սակավության պատճառով: Բույսերը խեղդվում են սովորաբար ձմեռվա սկզբում, հալված հողի վրա առատ ձյուն տեղալիս այն ժամանակ, յերբ աշնանացանի կենսագործունեությունը դեռևս չի դադարել, այլ շարունակվում է ձնաշերտի տակ, հավասարապես բույսերը խեղդվել կարող են նաև այն դեպքում, յերբ նրանց կենսագործունեությունը շարունակվում է սառցաշերտի տակ, վորը գոյացել է դեռ չսառած հողի վրա: Աշնանացանի փոռում նկատվում է նաև գարնան ձնահալա-

քի ժամանակ, յերբ ուժեղ ձնաշերտը կարծր սառուցաշերտ է դառնում և խանգարում է ողին մուտք գործելու կենդանացող բույսերի մոտ: Այդ դեպքերում փոման հնարավորությունն ուժեղանում է շվաքոտ տեղերում (հյուսիսային լանջերում, անտառեղրերի, ցանկապատերի մոտ և այլն), վորտեղ սառցաշերտն ավելի դանդաղ է հալվում: Աշնանացանի ցրտահիմացկուն տեսակներն հաճախ ավելի ուժեղ են յենթարկվում փոման, քանի վոր ձմեռվա յեղանակին այդ մշակությունների կենսագործունեությունն ավելի յերկարատև է, քան վոչ ցրտադիմացկուն տեսակները:

§ 20. Թրջումն ըստ իր բնության շատ նման է փոման: Բույսը, գտնվելով ջրի տակ և զրկված լինելով ողից իսպառ կամ մասնակի չափով, չորանում է: Սովորաբար բույսերը թրջում ենք դիտում ենք ցածրավայրերում, փոստաներում, լեռնալանջերում, ցածր սակավաշրաթափանց հողերում և յենթահողերում (կավ, կավավազուտ, կրաքար), վորոնք յերկար ժամանակով պահում են հողի մակերեսի վրա հավաքված ձնաշերտը:

§ 21. Ցրտահարումից, փոռումից և թրջումից վնասված ծիլերը կորցնում են իրենց բնական վառկանաչ գույնը, դիդնում են, դառնում մուգ, թառամում են արագորեն քայքայվում, ընդվորում այդ բույսերը մինչև քայքայվելը բորբոսնում են, ինչ վոր թռչման հետևանք է:

Գարնանը իր ժամանակին դաշտային վննություն կատարելիս ձյունահալից անմիջապես հետո, կամ ջրերի լճեցումից հետո, միշտ հնարավոր է գտնել փչացած բույսի մնացորդը, արմատներ, վորոնք հողից դուրս քաշելուց հեշտությամբ բաժանվում են վերջինից, հակառակ բույսի այն արմատների, վորոնք վնասվել են տարբեր վնասատուներից:

§ 22. Սառցահարում տեղի յեն ունենում այն ժամանակ, յերբ անակնկալ կերպով ջերմությունը խիստ է գարնանը, առաջ աշնանը: Այն բույսերը, վորոնք սառահարումից վնասվում են ծաղկման շրջանում, հաճախ չեն աճում և խոշոր տուկոսով պտուղ չեն տալիս: Սառցահարումից առանձնապես տառապում է հնդկացորենը (գարնանը և ամառը), այն բույսերի հասկերը, վորոնք յենթարկվում են սառցահարման ծաղկման շրջանում նվազում են և մոխրագույն—սպիտակ գույն են ստանում:

§ 23. Հեղեղում ասելով պետք է հասկանալ ջրերի հորդացում, վորն առաջ ե գալիս ձնահալքից կամ առատ անձրևիներից հետո, գարնանը: Ընկղմված դաշտերում բույսերը յերկար ժամանակով ջրի տակ են գտնվում և հաճախ խեղդվում (թըրջվում) փչանում են: Հեղեղումը կարող է հողի հետ միասին քշել տանել նաև ցանքերը:

§ 24. Հանձնաժողովը պետք է նկատի ունենա, վոր ցրտահարման և թրջման հետեւանքով առաջացած վնասներն իր բնությամբ շատ նման է այն վնասումներին, վոր պատճառում են գյուղատնտեսական մշակույթներին մի քանի միջատներ և հիվանդություններ, վորոնց, պատճառած վնասների համար Պետապը պատասխանատուություն չի կրում:

§ 25. Ամենից տարածված վնասատուների շարքին, վորոնց պատճառած վնասումներն իրեն բնությամբ նման են թրջման և փտման հետեւանքով առաջացած վնասումներին, պատկանում են՝ շվեդական և գեսսինյան ճանճի թրթուրը, աշնան սովկան (աշնան վորդ) հացի դյուրադարցիկ թրթուրը և դաշտային հողակոխանջը:

Շվեդական ճանճի թրթուրները (սպիտակ վորդ $1/4$ սանտ. յերկարությամբ) աշնանը մտնում են աշնանացան հաճարի կամ ցորենի տերեւի ծածկոցային տակ և մտնում են ցողունի ներսի մասը, վորտեղ սնվում են միջուկով, իսկ յերբեմն ել հարձակվում կողքի յերկրորդական ցողունների վրա և փչացնում ամբողջ բույսը:

Շվեդական ճանճի վնասած դաշտերը ծածկված են բացուտներով (բծերով) և դեղնած կիսաշոր բույսերով: Յեթե զգուշությամբ մենք պատենք դեղնած բույսը, ապա նրա արմատի վրա հեշտությամբ կտեսնենք բաց շականակագույն մի փոքրիկ բոժոժ, իսկ յերբեմն ել շվեդական ճանճի թրթուր: Այդ ճանճի թրթուրը գերազանցապես վնասում է աշնանացան ցորենին: Դյուրադարձիկ թրթուրը, վորդի գույնը դեղին է, յերկարությունը 2 սանտ. թրթուրը շատ պինդ է և դժվարությամբ է պատուվում: Դյուրադարձիկն ուտում է ընձյուղի միջուկը, վորից բույսը դեղնում և հաճախ փչանում:

Աշնանացան մշակույթների դյուրադարձիկից, շվեդական և գեսսինյան ճանճերից վնասվելու դեպքում բույ-

սերի ցողունները, վոր իրենց հիմքում կրմատած են, հեշտությամբ բաժանվում են արմատներից, վորոնք հաստատուն նստած են հողի մեջ, մինչդեռ թրջման կամ փրտման դեպքերում թուլացած արմատները հեշտությամբ հանվում են հողից:

Աշնան վորդը (աշնան առվկուն): Մասնայաբար յերեւման վալու դեպքում խոշոր վնասումներ է պատճառում աշնանացանին: Թրթուրը մոխրագույն է, կանաչ պատեւով: Այդ թրթուրից վնասված աշնանացանը ծածկվում են գարնանը տարբեր մեծության և ձևի բացուտներով: Կրծոտած, բայց դեռելս բոլորովին չփչացած դեղին բույսերսից կարելի յե իմանալ, վոր վնասման պատճառը աշնան վորդն է:

Դաշտային հողախիտունջը, յեթե ամռան անձրևային է, հողախիտունջն բազմանում է և խոշոր չափով վնասում աշնանացանին:

Յեթե ժամանակին դաշտային զննություն կատարվի, ապա դժվար չի հայտնաբերել նաև այդ վնասատուին:

§ 26. Առատ անձրևների հետեւանքով ամենից հաճախ առաջ յեկող հիվանդությունների շարքին պատկանում է կարտոֆիլի փտումը, վորը փուչից թափանցում է պաշարի մեջ, ինչպես նաև կերի ճակնդեղի սնկային հիվանդությունները:

§ 27. Հանձնաժողովը պետք է նկատի ունենա, վոր Պետապը պատասխանատուություն չի կրում:

ա) վնասատուների կամ հիվանդությունների պատճառած վնասումների համար, թեկուզ և դրանք առաջացած լինեն խոնավության հետեւանքով:

բ) արմատի վրա հացահատիկի ընդամելու կամ բույսերը պակեկու համար:

§ 28. Հատուկ ուշադրություն հանձնաժողովը պետք է դարձնի բույսերի փչանալու կամ վնասվելու պատճառները ստուգելու վրա: Յեթե բույսերի փչացումը կամ վնասումը հետեւանք է այն բանի, վոր ցանքը կատարված է յեղել տվյալ մշակույթի համար վոչ պիտանի հողամասում կամ հողի վատ մշակման վատորակ սերմեր գործածելու ցանքը ժամանակին չկատարելու, ցանքի նորմաները չպահպա-

ներու կամ մի վորեվի այլ տնտեսութիւնից կախված պատ-
ճառներով, ապա նման դեպքերում ապահովագրական վարձա-
տրութիւնն չի տրվում:

Հանձնաժողովը պետք է պարզի թե ինչ դրութեան մեջ են
ցանքերը վնասված դաշտում, քանի վոր Պետապի պատասխա-
նատվութիւնն սկսվում է ծիւրի յերեման դաշտը պահից և թե
արդոք ցանքսերի նոսրութիւնը ագրոկանոններ չկատարելու
հետեանք չեն:

Այդ պարզելու համար բացի հարցովորձից, մատյան-
ներ և փաստաթղթեր ստուգելուց անհրաժեշտ է նաեւ
վնասված ցանքերը և համեմատել հարեման չվնասված ցան-
քերի հետ:

§ 29. Դաշտային զննութեան արդիւնքները գրանցվում
են աւտի մեջ և յետեւ այս կամ այն նկատառումներով վերջ-
նական լուծարքը փոխադրվում է այլ ժամկետներ, ապա
կազմված աւտը վորպէս նախնական զննութեան աւտ է ծա-
ռայում և ոգտագործվում է ընդհանուր լուծարքի ժամանակ:
Ապահովագրական վնասներ չլինելու դեպքում, ինչպէս նաև
այն դեպքերում, յերբ ապահովագրվողն այնպիսի խախտում-
ներ է կատարում, վորոնք հիմք են տալիս ապահովագրա-
կան վարձատրութիւնից նրան զրկելու, հանձնաժողովը հա-
մապատասխան նշում է անում զննութեան աւտում վնասները
չհատուցելու մասին:

§ 30. Վերջնական լուծարք կատարելիս հանձնաժողովը
պետք է վորոշի.

ա) վնասված տարածութեան չափը.

բ) այն բերքի չափը, վորը կստացվի, յետեւ ցրտա-
հարում, թրջում, փտում, սառցահարում և հեղեղում տեղի
չունենային:

գ) ապահովագրված մշակութիւններին այլ տարերային յերե-
վույթներ պատճառած վնասները, վորոնց համար Պետապը պտ-
տասխանատվութիւնն չի կրում:

դ) գյուղատնտեսական մշակութիւնների՝ ցրտահարումից, թրջ-
ումից, փտումից, սառցահարումից, հեղեղումից վնասվելու տո-
կոսը (վնասման չափը):

§ 31. Թրջումից, ցրտահարումից, փտումից և սառցահարու-
մից առաջացած վնասումներ, ըստ իրենց բնույթի լինում են՝

ա) համատարած, յերբ փչանում է ամբողջ ցանքը կամ
վնասվում բոլոր բույսերն ապահովագրված ամբողջ տարածու-
թեան կամ նրա մի մասի վրա.

բ) մասնակի (նոսր), յերբ վնասված տարածութեան վրա
լինում են վնասված (փչացած) և առողջ բույսեր.

գ) բծավոր, յերբ վնասված տարածութիւնը տեղավորված
են ամբողջ ապահովագրված տարածութեան կամ նրա մի մասի
վրա առանձին բծերով (բացուտներով), զանազան մեծութեամբ.

դ) խառը, վորոնք ընդգրկում են այս կետի «Բ» և «Գ» յեն-
թակետերը, այսինքն, յերբ նոսրացած ցանքերի մեջ կան խոշոր
բծեր:

Բույսերը կարող են մասնակի վնասվել կամ իսպառ վոչըն-
չանալ:

§ 32. Դյուղատնտեսական մշակութիւնները բծավոր վնասում-
ների յենթակելու դեպքում վնասված տարածութիւնը վորոշվում
է կամ յուրաքանչյուր բծի տարածութիւնը չափելու միջոցով,
կամ հետեւյալ կարգով՝ նախ հաշվի յե առնվում բծերի (բացուտ-
ների) թիվը, ապա վորոշվում է աւտի բծի միջին տարածութեան
չափը և հետո աւտի բծի միջին տարածութեան չափը բազմա-
պատկվում է բծերի (բացուտների) թվի վրա: Որինակ՝ մեկ հեկ-
տարի համար վորոշված են 6 բացուտ, մեկ բացուտի միջին չափն
է 0,05 հեկտար, բազմապատկելով մեկ բծի տարածութիւնը բծե-
րի ընդհանուր թվի վրա, կստանանք մեկ հեկտարի բծերի ընդ-
հանուր տարածութիւնը—0,05 հեկտար+6=0,30 հեկտար:

§ 33. Դյուղատնտեսական մշակութիւնների խառը վնասման
դեպքում նախ վորոշվում է վնասման ընդհանուր տարածութեան
չափը և առանձին բծավոր վնասման տարածութիւնը, վորը հան-
վում է խառը վնասմամբ բռնված ընդհանուր տարածութիւնից:
Ստացված տարբերութիւնը կկազմի մասնակի վնասը, վնասման
տարածութիւնը:

Որինակ՝ խառը վնասման ընդհանուր տարածութիւնը հա-
վասար է 10 հեկտար: Սրա և բծավոր վնասման տարածութիւնը՝
2 հեկտար: 10 հեկտար և 2 հեկտար, տարբերութիւնը—8 հեկ-
տար կազմում է մասնակի վնասման տարածութիւնը:

§ 34. Այն դեպքում, յերբ մասնակի վնասում է տեղի ու-
նեցել և բծերի թիվն աննշան է և բծերը խոշոր չեն, վնասված
տարածութիւնը վորոշվում է ամբողջ նոսրացած տարածութիւնը

չափելու միջոցով, առանց հաշվի առնելու առանձին բծերը:

§ 35. Դյուրզատնտեսական մշակույթների վնասված տարածությունները վորոշվում են ըստ հնարավորություն յան ստույգ մատչելի յեղանակներով, այն ե՝ ա) պլաններ և հողային նշումներ ոգտագործելու միջոցով, բ) ցանքերի տարածություն յան յնականում գոյություն ունեցող բաժանումը՝ դաշտի, քառակուսիների, վանդակների, սյուների, հատատեղիների, փորոխների և այլն ոգտագործելու միջոցով: Վնասված հողամասերի սահմանագծերը չափվում են չափերոգով կամ չափալարով:

Վիճելի դեպքերում խոշոր տարածությունների վրա ինստրումենտալ չափում ե կատարվում: Յուրաքանչյուր կոլտնտեսություն և մենատնտեսություն համար վնասված ցանքերը պետք ե գննել և չափել առանձին:

§ 36. Այն բերքը, վորը կատացվեր մեկ հեկտարից քաշի միավորներով, յեթե ցրտահարում (փտում, թրջում, սառցահարում, հեղեղում) տեղի չունենար, վորոշվում ե յուրաքանչյուր վնասված մշակույթի համար առանձին:

Բերքը վորոշելու համար պետք ե համեմատել վնասված տարածության բերքը հարեվան այն չվնասված հողամասերի բերքի հետ, վորոնք նույնանման հողային և տնտեսական պայմաններում են գտնվում: Իսկ յեթե հնարավոր չի հարեվան հողամասերի բերքը վորոշելը, ապա վորպես հիմք պետք ե վերցնել տվյալ վայրի միջին բերքատվությունը:

§ 37. Վնասված տարածությունը, դաշտային գննություն յան հիման վրա ըստ ցանքերի վնասման չափի բաժանվում ե միատեսակ մասերի: Յուրաքանչյուր մասը կամ մի քանի մասեր, թեև դաշտի զանազան տեղերում գտնվող, բայց հավասար չափով վնասված, կազմում են վորոշ գոտի:

§ 38. Բույսերի վնասման չափը հետեվյալ կերպ ե վորոշվում՝

ա) վնասված հողամասերի փորձահարթակների վրա (1 քառ. մետր տարածությամբ) վորոշվում ե վնասված կամ փչացած բույսերի թվի տոկոսային հարաբերությունը դեպի նույն փորձահարթակների վրա յեղած բույսերի ընդհանուր թիվը: Յեթե այդ հնարավոր չի, ապա վնասման տոկոսը վորոշվում ե վնասված հողամասի փորձահարթակներում քնացած բույսերի թվի և չվնասված հողամասի փորձահարթակներում գտնվող բույսերի ընդհանուր թվի միջև յեղած տարբերության հիման վրա:

Այն դեպքերում, յերբ բույսերն իսպառ չեն փչանում, այլ մասնակի կերպով են միայն վնասվում, անհրաժեշտ ե նախապես առանձին վորոշել վողջ թփի վնասման տոկոսը:

Որինակ՝ վնասված հողամասը համաչափ չի նոսրացած: Վնասված տարածությունը ըստ վնասվածության չափի բաժանված ե յերկու գոտու: Առաջին գոտու տարածությունը հավասար ե 7,5 հեկտար, իսկ յեկրորդինը՝ 20,5 հեկտար: Առաջին գոտու փորձահարթակի վրա բույսերի ընդհանուր թիվն ե 250, փչացել ե 125, վնասման տոկոսն ե 50:

Յերկրորդ գոտու փորձահարթակում բույսերի ընդհանուր թիվը հավասար ե 300-ի, վնասվել ե 150 բույս, փչացել ե թփի 50%-ը: Վնասման տոկոսը յեկրորդ գոտում հավասար ե (150+50) = 25:

Այս դեպքում վնասված ընդհանուր տարածության վնասման միջին տոկոսը կկազմի՝

$$\begin{array}{r} 7,5 \times 50 = 375,0 \\ 20,5 \times 25 = 512,5 \\ \hline 28,0 \quad 887,5 \end{array}$$

$$887,5 : 28 = 31,68$$

Խոշոր հողամասերում վնասման տոկոսը վորոշելու համար կարելի յե վերցնել յուրաքանչյուր գոտում մի քանի փորձահարթակներ և նախ դուրս բերել վնասման %-ը յուրաքանչյուր գոտու համար և ապա միջին %-ն ամբողջ տարածության համար:

Որինակ՝ հողամասն ըստ վնասման չափի բաժանված ե յեղել յերեք գոտու: Առաջին գոտում հաշվառումը կատարվել ե չորս փորձահարթակների վրա:

Հաշվառման արդյունքները ցույց են տվել, վոր առաջին հարթակում նորմալ զարգացող բույսերի թիվը հավասար ե 35, յարթակում նորմալ զարգացող բույսերի թիվը հավասար ե 45, յերրորդ՝ 60 և չորրորդ՝ 40: Այսպիսով, յեկրորդ հաշվով քնացել են $200 : 4 = 50$ միավոր: Հարեվան չվնասման հողամասի փորձահարթակի բույսերի թիվը հավասար ե 250 միավորի:

Հետեվապես, վնասված բույսերի թիվը կլինի $250 - 50 = 200$ միավոր, ինչ վոր չվնասված հողամասի հարթակի 250 բույսերի հարաբերությամբ կազմում ե 80% (200×100) : $250 = 80$:

Այսպիսի յեղանակով վորոշվում ե վնասման չափը յուրաքանչյուր հաջորդ գոտու համար, վորից հետո դուրս ե բերվում

վնասման միջին $\frac{0}{10}$ -ն ամբողջ հողամասի համար:

Բերքի հասունացման շրջանում վնասներ լուծարքելու ժամանակ վնասման տոկոսը վորոշվում է վնասված ցանքի փորձահարթակի բերքի թերահավաքը չվնասված ցանքի փորձահարթակի բերքի հետ համեմատելու միջոցով:

Որինակ՝ սառցահարումից վնասվել է հնդկացորենի ցանքը: Ինչպես վնասված, նույնպես և չվնասված հողամասի փորձահարթակների հացահատիկի քաշը վորոշելու միջոցով պարզվել է, վոր վնասված տարածություն 1 հեկտար բերքը հավասար է 3 ցենտներին, չվնասված հնդկացորենի մեկ հեկտարին՝ 12 ցենտ.: Այսպիսով մեկ հեկտարի թերահավաքը կազմում է 9 ցենտներ: Այդ հողամասի վնասման տոկոսը հավասար է $(9 \times 100) : 12 = 75$:

§ 39. Այն դեպքերում, յերբ վնասվում են մի քանի մշակույթներ, վնասման տարածությունն ու չափը յուրաքանչյուր մշակույթի համար վորոշվում է առանձին:

§ 40. Ապահովագրական վնասներ վորոշելու համար պետք է հաշվի առնել և հանել այն վնասը, վոր գյուղատնտեսական մշակույթները կրել են այլ տարերային աղետներից (վնասատուներից, հիվանդություններից և այլն) վորոնց համար Պետալը պատասխանատու չէ:

Որինակ՝ մինչև վնասվելը հողամասից բերք եր սպասվում 10 ցենտներ մեկ հեկտարից: Վնասատուների պատճառած վնասների հետեւանքով այդ բերքը իջել է 2 ցենտներով: Դրանից հետո բերքը տուժել է ցրտահարությունից 4 ցենտներով: Այս դեպքում մինչ ցրտահարումը բերք սպասվում եր $10 - 2 = 8$ ցենտ., իսկ վնասման $\frac{0}{10}$ -ը կկազմի $4 : 8 = 50$, այն է $(4 + 10) : 8 = 50$:

§ 41. Յեթե ցրտահարման կամ թրջման հետեւանքով առաջացած վնասները լուծարքվում են կարկտահարման վնասների լուծարքման հետ միաժամանակ, ապա ապահովագրության յուրաքանչյուր տոկոսի համար ակտեր կազմվում են առանձին:

7. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ԶԱՓԸ ՎՈՐՈՇԵԼԸ

§ 42. Ապահովագրական վարձատրության չափը հաշվարկելիս նախ վորոշվում է ամբողջ վնասված տարածության ապահովագրական վարձատրությունը, այսինքն, 1 հեկտարի ապահովագրության նորման բազմապատկվում է վնասված հեկտարների քանակի վրա:

Ապահովագրական վարձատրության չափը վորոշվում է ապահովագրական պատասխանատվության նորման վնասման տոկոսի վրա բազմապատկելու միջոցով:

Որինակ՝ նորման 80 ռ. յե, վնասված տարածության չափը 10 հեկտ., վնասման չափը 25% , ապահովագրական պատասխանատվությունը հավասար է $80 \times 100 = 800$, ապահովագրական վարձատրությունը հավասար է $800 \text{ ռ. } 25\% = 200$ $\frac{800 \times 25}{100} = 200$

§ 43. Յեթե վնասված տարածության մեկ հեկտարի բերքի միջին արժեքը մինչ տարերային աղետ տեղի ունենալը (թրջում, ցրտահարում, փթում, սառցահատում, հեղեղում), մեկ հեկտարի համար սահմանված ապահովագրական նորմայից ավելի ցածր է, ապա ապահովագրական վարձատրությունը հաշվարկվում է, յեւնեթե բերքի իսկական արժեքից պետական միջնորդման պահանջը:

Որինակ՝ թրջումից տուժել է 10 հեկտար հաճառ: Վնասման չափն է 25% : Մեկ հեկտարի համար սահմանված է ապահովագրական պատասխանատվության նորման հավասար է 50 ռ.: Մեկ հեկտարի իսկական, արժեքը յեթե թրջում տեղի չունենալը, կազմում է 35 ռ.: Այս դեպքում ապահովագրական վարձատրությունը հաշվարկվում է վոշ թե 50 ռ., այլ 35 ռ. մեկ. հեկտարին: Հետեւապես, ապահովագրական պատասխանատվությունը 10 հեկտարի համար կհավասարի $35 \times 10 = 350$ ռ., իսկ այդ գումարի 25% -ը կկազմի $350 \times 25 = 87$ ռ. 50 կ. ապահովագրական վարձատրություն: $\frac{350 \times 25}{100}$

§ 44. Ցրտահարումից և թրջումից ապահովագրելու գծով Պետալը հատուցում է միմյան քանակական վնասները, իսկ արտադրանքի վորակն իջնելու համար պատասխանատու չէ:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Բերքի արժեքն ու վնասները վորոշելիս հաշվի յե առնվում տվյալ մշակույթի հիմնական արտադրանքի արժեքը միայն (որինակ՝ հացահատիկը—հացատաղրանքի արժեքը միայն): Կողմնակի արդյունքներ հատիկային մշակույթների վերաբերմամբ պալարները ու կարտոֆիլի վերաբերմամբ և այլն): Կողմնակի արդյունքները (ծղոտ, հարդը, փառչը և այլն) հաշվի չեն առնվում:

§ 45. Յեթե ցանքերն այնքան են տուժել ցրտահարումից, թրջումից, փտումից, սառցահարումից, հեղեղումներից, վոր անհրաժեշտ է նոր ցանք (կրկնացանք) կատարել, ապա ապահովագրման վարձատրությունն տրվում է փչացած սերմացվի ար-

ժեքի (պետական գներով) և հողի լրացուցիչ մշակման արժեքի չափով (տվյալ վայրի համար խորհրտնաժողովամատի կողմից սահմանված նորմաներով): Ապահովագրական վարձատրություն տրվում է այն ժամանակ, յերբ կրկնացանքն ստուգում է ապահովագրական տեսուչը կամ գյուղական խորհուրդը:

Այն դեպքում, յերբ աշնան ցանված դարձնացան մշակութային կրկնացանք է կատարվում, ապահովագրություն վճարվում է ապահովագրական վարձատրության այն նորմաների չափով, վորոնք սահմանված են դաշնակից հանրապետություններին Տնտխորհրդի կամ Ինք. ՍնՀ ժողկոմխորհների, յերկրային (մարզային), գործադիր կոմիտեների վորոշումներով այն նույն մշակութային առանձին ապահովագրման գծով:

§ 46. Այն դեպքում, յերբ ցրտահարումից, թրջումից, փտումից, սառցահարումից, հեղեղումներից տուժած կրկնացանքն ոգտագործվում է կանաչ կերի, խոտի կամ սիլոսի համար, վերջինների արժեքը (մթերման գներով) պետք է հանել ապահովագրական վարձատրության գումարից:

§ 47. Ցրտահարումից և թրջումից ապահովագրելու համար յեթե ապահովագրական պատասխանատվության ընդհանուր նորմա յե սահմանված կարկտահարման ապահովագրության հետ: Ուստի, յեթե ցանքերը վնասվել են կարկտից, բայց մնացել են արմատի վրա և հետագայում վնասվել են հեղեղումներից և սառցահարումից, ապա հեղեղումներից և սառցահարումից ապահովագրական վարձատրությունը հաշվարկվում է վոչ թե յեխնով ապահովագրության պատասխանատվության լրիվ գումարից, այլ յեխնով կարկտահարումից ապահովագրելու համար վորոշված պատասխանատվության նորմայի և ստացված ապահովագրական վարձատրության գումարի միջև յեղած տարբերությունից:

Ուրիմակ՝ վնասված է կարկտից 1 հեկտար ցորեն, վորն ապահովագրված է 60 ռ., ապահովագրական պատասխանատվության նորմայով: Վնասման չափը 30% է սահմանված — վնասներ վճարված է 18 ռ. գումարով: Այս դեպքում Գետապի պատասխանատվությունը մինչ բերքահավաքը մնում է՝ 60—18=42 ռ.: Վնասների հատուցման ընդհանուր գումարը բոլոր դեպքերում չի կարող ապահովագրական վարձատրության նորմայից ավելի լինել:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Կրկնացանք կատարելու դեպքում նոր ցանած մշակութային ապահովագրված համարվում է ապա-

հովագրական պատասխանատվության լրիվ նորմայով, վորը սահմանված է տվյալ մշակութի համար կոպարային ապահովագրության վերաբերյալ վորոշմամբ:

8. ԼՈՒԾԱՐՔԱՅԻՆ ԱԿՏ ԿԱԶՄԵԼՆ ՈՒ ՀԱՍՏԱՏԵԼԸ

§ 48. Զննության և վնասների գնահատման ժամանակ ստացված բոլոր տեղեկությունները մտցվում են լուծարքային ակտի մեջ: Լուծարքային ակտ կազմվում է յուրաքանչյուր կոտտեսության և բնակեցված կետի համար առանձին, իսկ վնասները վորոշվում յուրաքանչյուր տեսության համար առանձին: Լուծարքային ակտի բոլոր սյունյակները պետք է անպայման լրացնել: Վորեք սույնյակ լրացնելու համար տեղեկություններ չլինելու դեպքում պետք է գիծ քաշել:

Յեթե անհրաժեշտ է ակտը լրացնել այնպիսի տեղեկություններով, վորոնք չեն նախատեսված ակտի հատվածներում, ապա այդ տեղեկությունները տրվում են վորպես ակտի հավելված: Ակտն անպայման լրացվում է թանաքով և ապահովագրողին չի հանձնվում:

§ 49. Այն կոտտեսություններն և մնատեսությունները, վորոնք հատուկ պատճառներով հայտ չեն տալիս և դուրս են մնում հայտային ցուցակից մտցվում են լուծարքային ակտի մեջ տվյալ գյուղում ապահովագրական վնասներ լուծարելու ժամանակ, նշելով ակտի վերջում թե ինչ պատճառով նրանք ժամանակին հաշվառվում չեն հայտնելու ինչու հայտ ցուցակի մեջ մտցված չեն յեղի:

Լուծարքային ակտը կազմելուց հետո ստորագրում են հանձնաժողովի բոլոր անդամները:

Վնասներ վորոշելու վերաբերյալ հանձնաժողովի անդամների միջև ծագած տարաձայնությունները պետք է գրավոր ձևով կցել ակտին:

Լուծարքային ակտերը շրջանային ապահովագրական հանձնաժողովների համար սահմանված լիմիտների սահմաններում, հատուտում են շրջանային ապահովագրական հանձնաժողովները, շրջանային ապահովագրական տեսչի առաջագրությամբ: Այդ լիմիտները գերազանցող լուծարքային ակտերն ուղարկվում են հատուտում համար վերադաս ապահովագրական օրգաններին ըստ տատելու համար վերադաս ապահովագրական հանձնաժողովները պատկանելույն: Շրջանային ապահովագրական հանձնաժողովները

(խիստ զերկրամիտային վնասների վերաբերմամբ համապատասխան ապահովագրական որդանները) ակտերը պետք է քննել և հաստատեն այդպիսիներն ստանալու պահից 10 օրվա ընթացքում:

Շրջանային ապահովագրական հանձնաժողովի կամ ապահովագրական որդանի վորոշման մասին պետք է հայտնել տուժած տեղաբնակները յերեք օրվա ընթացքում: Այն դեպքում, յերբ շրջանային ապահովագրական տեսուչը գտնում է, վոր շրջանային ապահովագրական հանձնաժողովի վորոշումը հակասում է գործող որենքներին և կողարային ապահովագրության կանոններին կամ այս հրահանգին, նա պարտավոր է բողոքարկել այդ վորոշումը և դադարեցնել ապահովագրական վարձագրության վճարումը:

§ 50. Վնասների լուծարքման արդյունքներն ապահովագրական տեսուչը հայտնում է բերքատվությունը վորոշող միջշրջանային հանձնաժողովին: Կրկնացանք կառարկելու դեպքում անմիջապես հայտնում է կրկնացանքի անհրաժեշտության և կըրկնացանքի տարածության մասին շրջանային հողբաժնին, սերմանման կոմիտեյին և Մ.Տ. կայանի գերեկցիային:

9. ԼՈՒԾԱՐՔԱՅԻՆ ԱԿՏԵՐԻ ՓԱՍՏԱԿԱՆ ՍՏՈՒԳՈՒՄԸ

§ 51. Պետապի մարդային (յերկրային) վարչությունները և ինք. ՍՆՀ. կամ դաշնակից հանրապետությունների վարչությունները զերկրամիտային վնասների մասին տեղեկություններ ստանալիս անպայման պետք է ուղարկեն իրենց ներկայացուցիչին վնասներ լուծարքող հանձնաժողովների աշխատանքները ղեկաւարելու համար:

Բացի այդ, պետք է սխտեմատիկորեն ստուգել տեղում լուծարքային ակտերը հետեւյալ դեպքերում.—

ա) յեթե խոշոր տարածություն է վնասվել, մանավանդ այն դեպքերում, յերբ այդ բծային բնույթ է ունեցել:

բ) յեթե վնասման տուկոսը բարձր է յեղել (60-ից ավելի բարձր) և խոշոր տարածության վրա.

գ) ակտը քննելու ժամանակ հայտնաբերված կասկածելի դեպքերում կամ յեթե տեղեկություն է ստացված յեղել լուծարքը սխալ կատարելու մասին.

դ) յեթե տուժող կոլտնտեսությունները գանգատվում են շրջանային ապահովագրական հանձնաժողովների վճիռների առթիվ, ինչպես նաև ապահովագրական տեսչի կողմից շրջապահանձնաժողովների

վորոշումների դեմ բողոք տալու դեպքում.

յե) մրդարաններում տեղի ունեցած վնասների առթիվ այն դեպքում, յերբ լուծարքը կատարվել է առանց մասնագետի մասնակցության:

§ 52. Լուծարքային ակտերի փաստացի ստուգումը նպատակ ունի պարզելու՝

ա) թե արդյոք իսկապես տեղի յին ունեցել ցրտահարում, թրջում, փտում, սառցահարում, հեղեղումներ.

բ) ճիշտ է վորոշված արդյոք վնասված տարածությունը.

գ) ճիշտ է վորոշված արդյոք վնասված տուկոսը.

յե) ճիշտ է հաշվարկված արդոք վնասների և ապահովագրական վարձատրության չափը.

զ) ապահովագրվողի ապահովագրական վարձատրություն ստանալու իրավունքը:

§ 53. Այն դեպքերում, յերբ փաստացի ստուգումը հաստատում է, վոր դիտավորյալ կերպով սխալ են լուծարքված վնասները ապօրինի կերպով ապահովագրական վարձատրություն ստանելու կամ լուծարքային ակտեր միեմման պլանների իջեցման համար ոգտագործելու նպատակով, ապահովագրական որդանները պարտավոր են՝ ա) անմիջապես հայտնել այդ մասին դատախազական և Պետ քաղվարչության որդաններին հանցավորներին պատասխանատվության յեթարկելու համար, բ) հայտնաբերված փաստերի մասին իրադեկ դարձնել կոլտնտեսականների և տվյալ գյուղի բնակիչների ընդհանուր ժողովներին:

10. ՍՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆ ՎՃԱՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ

§ 54. Ապահովագրական վարձատրություն ապահովագրվողին պետք է տրվի վոչ ուշ քան լուծարքային ակտը հաստատելու պահից հետեւյալ ժամկետներում՝ կոլտնտեսություններին 5 օրից, որվանից հետեւյալ ժամկետներին՝ 10 օրից և մենատնտեսներին 15 օրից վոչ ուշ: կոլտնտեսականներին՝ 10 օրից և մենատնտեսներին 15 օրից տալիս,

§ 55. Շտապ լուծարքների գծով վարձատրություն տալիս, նախ քան վճարում կատարելը, պետք է ապահովագրական վարձատրությունների կրկնացանք կատարել:

11. ԲՈՂՈՔՆԵՐ


§ 56. Ապահովագրական որդաններում են կրում տուժած տնտեսություններին հասանելիք ապա-

հովազրական վարձագրությունը ժամանակին
ինչպես նաև կոպարային ապահովագրության
հրահանգը կիրառելիս բյուրոկրատական խեղաթյ
չտալու համար:

§ 57. Շրջանային ապահովագրական հանձնաժողովների վո-
րողումների դեմ բողոքներ գրառնող ձեռնով տրվում են յերկրի,
մարզի, Ինք. ՍԽՀ ապահովագրական վարչություններին, իսկ
մարզային բաժանում չունեցող դաշնակից հանրապետություն-
ներում՝ դաշնակից հանրապետությունների ապահովագրական
վարչություններին:

§ 58. Յուրաքանչյուր բողոք պետք է քննության առնվի
և լուծվի վե՛ր ու՛շ քան այն ստանալու պահից 10 օրվա ընթացքում:

Անցյալում հրատարակված բոլոր հրահանգներն ու կար-
գադրությունները գյուղատնտեսական մշակույթների ցանքերի
ցրատահարումից և թրջումից ապահովագրելու գծով վնասներ
լուծարելու մասին վերացված են համարվում:



Թարգմանեց ուսուերեցից՝ Լ. ՄԻՐԶԱ-ԱՎԱԳՅԱՆ
Պատ. խմբ. Մ. ՍԱՐԳՍՅԱՆ
Մեքագրեց Գ. ՅԵՐԵՄՅԱՆ

ՅԵՐԵՎԱՆ, ԳԱՆԱՔԵՌՇԵՆԻ ՏՊԱՐԱՆ